ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի 8-րդ գումարման 5-րդ նստաշրջանի (ժամանակահատված՝ 01.01.2023թ.-30.06.2023թ.) ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. **Կայացած նիստերի ընդհանուր քանակը՝**

   1.1 Նշված ժամանակահատվածում կայացած նիստերի ընդհանուր քանակը՝ 12 (տասներկու), որից՝ 5 (հինգ) հերթական, 7 (յոթ) արտահերթ: Աժ մշտական հանձնաժողովների հետ իրականացվել է թվով 16 (տասնվեց) համատեղ նիստեր, որից Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումների մասով՝ 12 (տասերկու), իսկ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների քննարկման մասով՝ 4 (չորս):

2. **Նախագծերի (օրենք, համաձայնագիր, հաղորդում, հաշվետվություն)**

   2.1 Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել թվով 17 (տասնյոթ) նախագծերի մասով, որոնցից ընդունվել են ամբողջությամբ՝ 7 (յոթ), դուրս է եկել շրջանառությունից՝ 6 (վեց), դեռևս չեն ընդգրկվել օրակարգում՝ 3 (երեք), օրակարգում ընդգրկված՝ 1(մեկ):

3. **Նիստերի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են հետևյալ նախագծերը՝**

   3.1 «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Հեղինակներ՝ Գևորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան ./ Պ-469-13.12.2022,30.01.2023-ՖՎ-011/2ամբ./.

   3.2 ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում/573-28.04.2023-ՖՎ/.

   3.3 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում /575-02.05.2023-ՖՎ/.

   3.4 «Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը վավերացնելու մասին. Հեղինակ՝ ՀՀ կառավարություն /Կ-553-07.04.2023-ՖՎ-011/0/.

   3.5 «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական

կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին.Հեղինակ՝ ՀՀ կառավարություն:

3.6 Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն / Կ-574-02.05.2023-ՖՎ-012/0/:

3.7 Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի միջեւ «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին Հեղինակ՝ ՀՀ կառավարություն /Կ-605-30.05.2023-ՖՎ-011/0/.

4. **Նստաշրջանի օրակարգում դեռևս չեն ընդգրկվել հետևյալ նախագծերը՝**

4.1 «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին. Հեղինակներ՝ Գևորգ Պապոյան, Հասմիկ Հակոբյան/ Պ-592-23.05.2023-ՖՎ-011/0/.

4.2 Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին. Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Հասմիկ Հակոբյան/ Պ-592[1]-23.05.2023-ՖՎ-011/0/.

4.3 «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի եւ վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KFW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» հայտագրերի փոխանակման ձևով կնքված համաձայնագիրը վավերացնելու մասին. Հեղինակ՝ ՀՀ կառավարություն /Կ-617-19.06.2023-ՖՎ-011/0/

5. **Նստաշրջանի օրակարգում ընդգրկվել են հետևյալ նախագծերը՝**

5.1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, Հեղինակ՝ Գեւորգ Պապոյան/ Պ-564-19.04.2023,22.05.2023-ՖՎ-011/1/

6. **Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմել է հետևյալ հարցումներով՝**

6.1 **ՀՀԿԳՄՍ նախարարություն**

«ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անկացման շրջանակներում տրամադրել տեղեկատվություն մի շարք ծրագրերի մասով արդյունքային ցուցանիշների բացակայության և այդ

միջոցառումների վրա կատարված ծախսերի ուղությունների և կշիռների վերաբերյալ/ ԱԺՀ.5/3180-2023/ :

6.2 ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ կառավարության և Իրանի Իսլամական հանրապետության կառավարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների և դրանց կատարման ընթացքի մասին՝ ըստ գերատեսչությունների /ԱԺՀ.5/3169-2023/:

6.3 ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ կառավարության, կառավարության ենթակա մարմինների/գերատեսչություններ և այլն/ գործող ռազմավարությունների առկայության, ժամկետների և դրանց վերաբերյալ հղումները/ ԱԺՀ.5/3144-2023 /:

6.4 Կադաստրի կոմիտե

«Ինտեգրված կադաստրի ստեղծման» ռազմավարական ծրագրի հանգրվանային նպատակների հասնելու համար ռազմավարական փաստաթղթում առկա միջոցառումների մասով կատարված աշխատանքների վերաբերյալ /ԱԺՀ.5/3004-2023/:

6.5 ՀՀ ազգային ժողովի բյուջետային գրասենյակ

Յուրաքանչյուր ամիս, Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների հավաքագրման և ծախսերի (Մշտական հանձնաժողովներին ըստ իրենց գործունեության ոլորտների) կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասով:

7. Հաշվետվություններ / թվով 2 /

7.1 Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2022 թվականի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ:

7.2 Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2023 թվականի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

8. Հանձնաժողովի որոշումներ /թվով 4/

8.1 ԱԺ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի եւ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ հրավիրելու վերաբերյալ՝ Առողջապահության նախարարությունում ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկելու նպատակով:/09.01.2023/.

8.2 Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի եւ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարությունում անտառօգտագործման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկելու նպատակով:/30.01.2023/:

8.3 ԱԺ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի, Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության և Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ հրավիրելու վերաբերյալ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2022թ պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկելու նպատակով:/15.05.2023/

8.4 Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի եւ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ ՀՀ Կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2022 թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունը քննարկելու նպատակով:/12.06.2023/

9. 5-րդ նստաշրջանի ընթացքում կատարված քաղաքացիների ընդունելությունների և ստացված դիմում- նամակների մասով

9.1 5-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ունեցել է 5 ընդունելություն, թվով 17 քաղաքացիների համար: Հանձնաժողովի և նրա նախագահի հասցեով քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել են թվով 27 դիմում – նամակներ:

10. Աշխատաժողովներ և աշխատանքային քննարկումներ (թվով 5)

10.1 Հանձնաժողովը կազմակերպել է ԱԺ-ում «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին օրենքի նախագծի վերաբերյալ թեմայով աշխատանքային քննարկում (17.02.2023) :

10.2 ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ Կենտրոնական բանկում աշխատանքային քննարկում ԿԲ ղեկավար կազմի և ԱԺ պատգամավորների հետ՝ դրամավարկային քաղաքականության, ֆինանսական կայունության և անկանխիկ գործառնությունների վերաբերվող հարցեր (10.03.2023 թ.):

10.3 Հայաստանում ոլորտային քաղաքականությունների մշակման մասնակցային բյուջետային աջակցության վերաբերյալ աշխատանքային քննարկում (08.05.2023 թ.):

10.4 ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի և բյուջետային գրասենյակի հետ համատեղ «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարողականը՝ շեշտադրելով ծրագրային, գենդերազգայուն և կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ) բյուջետավորման հարցերը» թեմայով արտագնա աշխատաժողով (20.05.2023 թ.-21.05.2023 թ.):

10.5 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին աշխատանքային քննարկում (01.06.2023 թ.):

Ամփոփելով արձանագրում ենք՝

1. **Կայացած նիստերի քանակ – 12, որից՝ 5 հերթական, 7 արտահերթ, 16 համատեղ**
2. **Նախագծեր՝ թվով 7 ամբողջությամբ ընդունված**
3. **Հաշվետվություն – 2**
4. **Հանձնաժողովի որոշումներ – 4**
5. **Քաղաքացիների ընդունելություն --17 քաղաքացի**
6. **Դիմում-նամակներ -27**
7. **Աշխատաժողովներ և աշխատանքային քննարկումներ- 5:**